ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ

ք. Երևան «_____» _____ 202 թ.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը, ի դեմս «ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ Մանուկ Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), մի կողմից, որը գործում է կանոնադրության հիման վրա, և
_____ (այսուհետ՝ «Սովորող»),
անուն, հայրանուն, ազգանուն
մյուս կողմից, որոնք ստորև հիշատակվում են որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

1. Պայմանագրի առարկան ուսանողի՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով
_____
_____
մասնագիտությամբ ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:
2. Ուսման տևողությունը 3 տարի է:
3. Ուսուցումն իրականացվում է անվճար հիմունքներով:

2. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Ուսուցումը կազմակերպվում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտությունների պետական չափորոշչներին (այսուհետ՝ Չափորոշիչ) համապատասխան և սահմանված կարգով հաստատված ուսումնական պլանների հիման վրա:
5. Ուսանողի ընդունելությունը իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության սահմանված կարգով: Ուսանողը(Օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է օրենքով սահմանված փաստաթղթեր, որոնց հիման վրա սահմանված կարգով վարվում է նաև Ուսանողի անձնական գործը:
6. Ուսումնական խմբերը (կուրսերը) կազմավորվում են սահմանված կարգով: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը ուսումնական պարապմունքն է: Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են սահմանված կարգով՝ ըստ հաստատված դասացուցակի և ժամանակացույցի:
7. Ուսանողը կրթահամալիրի գրադարանի բաժանորդն է, սահմանված կարգով օգտվում է գրադարանի տպագիր ուսումնական միջոցներից, նյութերից:
8. Ընթացիկ, ամփոփիչ ստուգումներն իրականացվում են նախատեսված ժամկետներում և սահմանված կարգով:
9. Ուսումնական պլանով որոշված պարապմունքներին Ուսանողի մասնակցությունը պարտադիր է: Պարապմունքից բացակայությունը, դրա լրացումը կատարվում է սահմանված կարգով: Անհարգելի բացակայող ուսանողի պայմանագիրը սահմանված կարգով լուծվում է: Անչափահաս ուսանողի չհաճախելու դեպքում Օրինական ներկայացուցիչը ծանուցվում է սահմանված կարգով:

10. Կանոնները չպահպանելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում օրենքով և սահմանված կարգով ուսանողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ ա) զգուշացում, բ) նկատողություն, գ) խիստ նկատողություն, դ) հեռացում:
11. Կրթահամալիրիը կարող է միակողմանի լուծել պայմանգիրը, եթե ուսանողը, Օրինական ներկայացուցիչը չեն պահպանել պայմանագրային դրույթները, կամ Ուսանողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, կանոններով, կանոնադրությամբ, պայմանագրով:

Կրթահամալիրը պարտավոր է՝

1. մինչև Պայմանգրի կնքումը Ուսանողին և Օրինական ներկայացուցչին ծանոթացնել առաջարկվող Պայմանագրին, Կրթահամալիրի կանոնադրությանը, կանոններին, ծրագրին, կարգերին.
2. ուսուցումը կազմակերպել ծրագրի և Չափորոշիչների պահանջներին համապատասխան՝ Ուսանողի համար ապահովելով ծրագրով և Չափորոշչով գիտելիքների, կարողությունների, հմտությունների ընդհանրական որակական մակարդակը.
3. հարգանքով վերաբերվել Ուսանողի իրավունքներին ու ազատություններին՝ միաժամանակ կարևորելով քաղաքացիական գիտակցությունը,
4. ստեղծել Ուսանողի առողջության, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ.
5. ապահովել Ուսանողի կյանքի անվտանգության պայմանները՝ միաժամանակ իրագործելով նրա շահերի դեմ ուղղված ոտնձգություններից պաշտպանելու իրավաչափ գործողություններ.
6. սահմանված կարգով ապահովել ուսանողների մասնակցությունը կառավարմանը՝ առավելագույնս խթանելով ինքնուրույնությունը և անհատական պատասխանատվությունը:

Կրթահամալիրը իրավունք ունի՝

7. Ուսանողին ազատել Կրթահամալիրից կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը չպահպանելու և սույն պայմանգրով նախատեսված այլ դեպքերում,
8. Օգտվելու ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 12-ի 1989-Ն որոշմամբ այլ իրավունքներից:

Ուսանողը պարտավոր է՝

9. կատարել կրթահամալիրի կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.
10. հաճախել ուսումնական պլանով նախատեսված պարապմունքներին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառույթները.
11. խնամքով վերաբերվել Կրթահամալիրի գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը.
12. հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.
13. սահմանված կարգով ներկայացնել ուսումնական պլանով նախատեսված հաշվետվությունները.
14. հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին, մասնագիտական փորձառություններին.

Ուսանողն իրավունք ունի.

15. ուսումնական նպատակներով ազատորեն օգտվելու Կրթահամալիրի կաբինետներից, ուսուցման բոլոր միջոցներից, այդ թվում՝ համակարգիչներից, համացանցից և թվային այլ միջոցներից,
16. ՈՒսանողը, դիմորդը և օրինական ներկայացուցիչն իրավունք ունեն ծանոթանալու Կրթահամալիրի լիցենզիային, կանոնադրությանը, ներքին կանոնակարգերին.
17. մասնակցելու քննարկումներին.
18. նպատակային կամ ակադեմիական արձակուրդից վերադառնալիս ուսումը շարունակել այն հիմունքով, ինչ հիմունքով սովորել է՝ դիմելու սահմանված ժամկետները չխախտելու դեպքում:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Պայմանագիրը լուծվում կամ գործողությունը դադարում է սահմանված կարգով.

1. Օրինական ներկայացուցչի և Ուսանողի նախաձեռնությամբ.
2. Կրթահամալիրի նախաձեռնությամբ.
3. Կրթահամալիրի լուծարման կամ վերակազմավորման դեպքում.
4. Ուսանողի նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի դեպքում.
5. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից:
2. Նոր ուսումնական տարվա համար կողմերը կարող են Պայմանագրում լրացուցիչ ծառայությունների վերաբերյալ փոփոխություններ կամ լրացումներ անել, որոնք իրավական ուժ կստանան, եթե կատարվեն գրավոր և ստորագրվեն կողմերի կողմից:
3. Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Կողմերի տարաձայնությունները լուծվում են համատասխան իրավական ակտերի կարգավորումներով, փոխադարձ համաձայնությամբ:

7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:
2. Պայմանագրի ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրման պահից և գործում է ուսանողի ամբողջ ուսումնառության ընթացքում:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովորող

Ա.Ա.Հ. _____

Հասցե՝ _____

Անձնագիր՝ _____

Երբ է տրված՝ _____

Ում կողմից՝ _____

Հեռ. _____

_____

(ստորագրություն)

«_____» _____ 202 թ.

Լիազոր մարմին

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր»
ՊՈԱԿ

ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29
ՀՀ ՖՆ ԳՎ Հ/Հ 900018005018
ՀՎՀՀ 01361716

Ռեկտոր՝

_____**Մ. Մուրադյան**
Կ.Տ. (ստորագրություն)

«_____» _____ 202 թ.

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է*

Պայմանագրին ծանոթացել եմ, առարկություն չունեմ՝
Սովորողի ծնող (հայր, մայր), որդեգրող, հոգաբարձու (անհրաժեշտն ընդգծել)
Ազգանուն, անուն, հայրանուն _____
Հասցե՝ _____
Անձնագիր՝ _____
Երբ է տրված՝ _____
Ում կողմից՝ _____
Հեռ.՝ _____

_____
(ստորագրություն)

«_____» _____ 202 թ.

**ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով անչափահաս Սովորողի համար:*

Ծանոթացել եմ պայմանագրին, կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և ստացա պայմանագրի իմ օրինակը, որի համար ստորագրում եմ՝ _____